

**ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ
ՈՐՈՇՈՒՄ 2/2**

ք. Երևան

31 հոկտեմբերի 2024 թ.

**«ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՖԻԶԻԿԱՅԻ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ
ԿԱԶՄՈՒՄ ԳՈՐԾՈՂ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԸ
ՎԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ, ԼՈՒԾԱՐԵԼՈՒ ԵՎ ՆՈՐ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄՆԵՐ ՍՏԵՂԾԵԼՈՒ
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ «ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ
ՀՈԳԱԲԱՐՁՈՒՄՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻՆ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի (այսուհետ՝ ԵՊՀ) ֆիզիկայի ինստիտուտի գիտական խորհրդի առաջարկությունը և ղեկավարվելով ԵՊՀ կանոնադրության 49-րդ կետի 2-րդ, ԵՊՀ գիտական խորհրդի աշխատակարգի 4-րդ կետի 2-րդ ենթակետերով՝ ԵՊՀ գիտական խորհուրդը որոշում է.

1. առաջարկել ԵՊՀ հոգաբարձուների խորհրդին 2025 թ. հուլիսի 1-ից ԵՊՀ ֆիզիկայի ինստիտուտում.

1) լուծարել «Օպտիկայի ամբիոն», «Կիսահաղորդիչների ֆիզիկայի և միկրոէլեկտրոնիկայի ամբիոն», «Հեռահաղորդակցության և ազդանշանների մշակման ամբիոն» կառուցվածքային ստորաբաժանումները,

2) «Բարձրագույն մաթեմատիկայի ամբիոն» կառուցվածքային ստորաբաժանումը միաձուլել (վերակազմակերպել) «Ակադեմիկոս Գուրգեն Սահակյանի անվան տեսական ֆիզիկայի ամբիոն» կառուցվածքային ստորաբաժանման հետ և վերակազմակերպված ստորաբաժանումն անվանել «Տեսական և մաթեմատիկական ֆիզիկայի ամբիոն»,

3) «Մոլեկուլային ֆիզիկայի ամբիոն» կառուցվածքային ստորաբաժանումը միաձուլել (վերակազմակերպել) «Պինդ մարմնի ֆիզիկայի ամբիոն» կառուցվածքային ստորաբաժանման հետ ու վերակազմակերպված ստորաբաժանումն անվանել «Կոնդենսացված վիճակի ֆիզիկայի ամբիոն»,

4) «Ռադիոֆիզիկայի և էլեկտրոնիկայի ամբիոն» կառուցվածքային ստորաբաժանումը միաձուլել (վերակազմակերպել) «Կիրառական էլեկտրադինամիկայի և մոդելավորման ամբիոն» կառուցվածքային ստորաբաժանման հետ ու վերակազմակերպված ստորաբաժանումն անվանել «Ռադիոֆիզիկայի և հեռահաղորդակցության ամբիոն»,

5) «Միջուկային ֆիզիկայի ամբիոն» կառուցվածքային ստորաբաժանումը միաձուլել (վերակազմակերպել) «Ակադեմիկոս Վիկտոր Համբարձումյանի անվան ընդհանուր ֆիզիկայի և աստղաֆիզիկայի ամբիոն» կառուցվածքային ստորաբաժանման հետ ու վերակազմակերպված ստորաբաժանումն անվանել «Միջուկային ֆիզիկայի և աստղաֆիզիկայի ամբիոն»,

6) ստեղծել «Օպտիկայի և ֆոտոնիկայի ամբիոն» կառուցվածքային ստորաբաժանումը,

7) ստեղծել «Նյութագիտության և նանոտեխնոլոգիաների ամբիոն» կառուցվածքային ստորաբաժանումը,

8) ստեղծել «Ֆիզիկական պրոցեսների մոդելավորման և ազդանշանների մշակման ամբիոն» կառուցվածքային ստորաբաժանումը:

ԵՊՀ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ

Հ. Վ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ